



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

281.64
9-89

4362

Q-nhgnp 27-cmamaply
li jnlp
ppphfo

Rhuth
1886

2010

Տ Հ Ա Յ Ա Խ Ա Յ Ա
9-97

Ք Ր Ե Ր Ա Ր Ա Լ Ա Կ Ա Ս Ի Ո Ր Ի Զ
Ե Կ

Ի Կ Բ Ո Ր Գ Ի Ց Ը

Հ Բ Ո Ս Ո Ր Ո Կ Ե Ց

Յ ո վ հ ա ն ն ե ւ ս Ե տ ա ռ վ ե ա ն

Գ լ ի ն է 15 կ մ դ.

1886
Տ Ա Ր Ա Ր Ա Ր Ա Ր Ա Ր Ա Ր Ա Ր Ա
Պ Ե Վ Լ Ի Վ

281.64
4-89
ՔՐԻԺԱՅ ՀԱԿՈՍԱԿՈՂԻՔ
ԵՒ

Ի Կ Ր Ո Ր Գ Ի Փ Ը

ՀՐԱՄԱ.ՐԱԿԵՑ



Յովչաննես Եռևանի ժեման.

9
12
9
6
4
0
6
1

Գիշեալ է 15 կող.

1886

ՏՊԱ.ՐԱՆ 1. Գ. ԿՐԱՄԱ.ՐԵՆԿՈ.

ԹԻՖԼԻՍ



ԳՐԻԳՈՐ ԼԱՒՄԱԿՈՐԻՉ *)

Доз. цензурою 15-го Февраля 1886 г. Тифлисъ

Սէրելի զաւակներս, այս անդամ ես կամենում եմ ձեզ պատմել մեր սուրբ Գրիգոր Լուսաւորչի պատմութիւնը: Այնպիսի մեծ բարերարութիւններ արած է Լուսաւորիչը մեր ազգին և եկեղեցուն, որ ամենայն հայ մարդ պարաւոր է Հայք Ֆրէ պէս լաւ իմանալ նորա պատմութիւնը: Ուրեմն գուք, սիրելինելա, լաւ լսեցէք ինչ որ պատմելու եմ ձեզ և աշխատեցէք այնպէս հաստատել ձեր մտքի մէջ, որ երբէք չը մոռանաք:

Ինչպէս լսած էք շատ անդամ, շատ հին ժամանակներում մեր Հայաստանի հարևանները միշտ ատում և նեղացնում են եղել մեր ազգը: Եւ ինչու այսպէս: Այն պատճառով որ մեր ազգը եղել էմիշտ խելօք, աչքաբաց, միշտ սիրել է իւր հայրենիքը և թուրք ձեռքին չէ թողել, որքան կարողացել է, որ նոքա—հարևանները գալին և ոտի տակ տրոլիին մեր երկիրը: Այնպիսի անբարեմիտ հարևաններից աւելի շատ ատել են մեզ, աւելի սաստիկ թշնամի եղել են մեր ազգի համար և աւելի ծանր վնասներ հասցըւ են մեր ազգին և հայրենիքին պարսիկները: Բայց իւրեանց չար մտքերով և

*) Գրիգոր Լուսաւորչի և իւր որդոց իենսագրութիւնը մէնք հանեցինք «Գրլոց» մանկավարժական աժսագրի մանկական բաժնեց, որը խմբագրում էր հանգուցեալ ծայրագոյն վարդապետ Բաստամենցը: Ինչպէս ամբողջ մանկական բաժնը, նոյնպէս և այս՝ կազմում էր ինքը հանգուցեալ Բաստամենցը:

ցանկութիւններով, իւրեանց անտանելի վնասներով պարսիկները բացել են մեր ազգի աչքը, սահման են նորան միշտ արթուն մնալ, միշտ քաջութեամբ պաշտպանել իւր երկիրը և եկեղեցին, և այս կողմից պարսիկները, թէև հակառակ իւրեանց կամքին, մեծ օգուտներ են տուել մեզ: Պարսիկների միենոյն թշնամութիւնը և չարամտութիւնը պատճառ տուեց, որ մեր սիրելի եկեղեցին, որը հաստատել էին սուրբ Թագէսս և Բարդուղիմէսս Առաքեալները, աւելի լաւ Հաստատուեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռքով:

—Պարսկաստանի թագաւոր Արտաշէրը սաստիկ թշնամի էր Հայաստանին և մանաւանդ մեր մեծ կամ առաջին Խոսրով թագաւորին: Եւ ահա ինչ պատճառով: Այս Արտաշէրը սպանց Պարսկաստանի Արտաւան Արշակունի թագաւորը և ինքը դարձաւ թագաւոր: Մեր Խոսրով մեծը, որը ազգաւ նոյնակէս Արշակունի էր և բարեկամ Արտաւանին, իմանալով այս՝ սկսեց լորդորել Պարսկաստանի նախարարները, որ նոքա դուրս անեն անօրէնութեամբ թագաւոր նստած Արտաշէրը: Այս պատճառով ծագեցաւ մեծ ատելութիւն Արտաշէրի և Խոսրովի մէջ և շարժուեցաւ սաստիկ պատերազմ, որը շարունակում էր համարեա 25 տարի: Եւ որովհետեւ քաջ Խոսրովը և նորա քաջ զօրքը միշտ յաղթում էին Արտաշէրին, նա՝ տեսնելով որ չէ կարող հանդիստ թագաւորել Պարսկաստանի վերայ, քանի որ կենդանի է Խոսրովը, որոշեց դաւաճանութեամբ ազատվիլ նորա ձեռքից: Նա մի անգամ իւր նախարարների ժողովի մէջ լայտնեց որ, ով ոք մի կերպով կսպանէ Հայոց Խոսրով թագաւորը, նորան ինքն Արտաշէրը կտայ մեծամեծ պարգևներ և պատիւներ: Այս լսելով նախարարներից մէկը—Անակ Պահլաւունի—յանձնառու եղաւ կատարել թագաւորի չար ցանկութիւնը և խորաման՝ կեղծաւորութեամբ փախչելով իւր բոլոր ընտանիքով

Պարսկաստանից, իբր Հալածուած Արտաշէրից և ավստամբուած նորա դէմ, գնաց Խոսրովի մօտ և մեծ սիրով ու պատուով ընդունուեցաւ նորա կողմից և ընակուեցաւ Վաղարշապատում: Այստեղ նորա կինը Ոգոհէ կամ Ռոգոհի ծնեց 25՝ թուին Փրկչի մի զաւակ Գրիգոր անունով, որ յետոյ գարձաւ Հայոց ազգի Լուսաւորիչ:

Անակը՝ խորամտնկութեամբ հաւատարիմ ձևանալով Խոսրովին և վայելելով նորա սէրը, մի օր թագաւորի որսորդութեան ժամանակ իւր եղբօր հետ միասին գաւաճանութեամբ սպանեցին նորանեւ իրանք փախան: Հայոց ազգասէր նախարարները ընկան նոցա յետեկից և հասնելով նոցա Երասխ գետի մօտ՝ բռնեցին և ձգեցին նոցա գետի մէջ, ուրեւ խեղտուեցան չարաչար: Նախարարները և ժողովուրդը այն աստիճան զայրացել էին Անակի դաւաճանութեան վերայ, որ կամեցան կոտորել նորա բոլոր ընտանիքը: Բայց Աստուծոյ խնամքով սրի բերանից ազատ մնացին Անակի երկու որդիքը—Սուրէն, որը իւր գալեակը (ծծմայր) փախցրեց Պարսկաստան և Գրիգոր, որը իւր գալեակը փախցրեց Կատաղովկիայի Կեսարիա քաղաքը և ալնտեղ մեծացնում էր զգուշութեամբ: Որովհետեւ ինքն Սոփիան, Գրիգորի գալեակը, քրիստոնեայ էր, ուստի և Գրիգորը կըթեց քրիստոնէական հաւատի մէջ, եւ երբ մեծացաւ՝ պսակեց մի Պաւիթ անունով մարդու աղջկայ հետ, որի անունը էր Մարիամ: Այս ամուսնութիւնից Գրիգորը ունեցաւ երկու տղայ—Վրժանէս և Արիստակէս:

Անիրաւ Արտաշէրը, իմանալով Խոսրովի մահը, մեծ զօրքով եկաւ լարձակուեցաւ Հայաստանի վերայ և աւելից ու քարուքանդ արեց համարեա բոլոր երկիրը, իսկ Խոսրովի բոլոր ընտանիքը հրամալեց սրով կոտորել: Բայց Աստուծոյ ողորմութեամբ Խոսրովի երկու զաւակները, մի աղջիկ և մի տղայ, ազատ մնացին այս փորձանքից, որովհետեւ աղջիկը

Խոսրովիդուխտ անունով, փախցրեց Ամատունեաց Օտայ նախարարը և տարաւ Անի կամ Կամախ բերդը, և անտեղ պահպանում էր նորան և մեծացնում էր մեծ խնամքով: Իսկ միւս զաւակը—Տրդատ անունով—փախցրեց Մանդակունի Արտաւազդ նախարարը և տարաւ նորան առաջ Կեսարիա, յետոյ Հռովմ, ուր մեծանալուց յետոյ Տրդատը եղաւ Հռովմայեցոց կալսեր պալատականներից մինք:

Գրիգոր Լուսաւորիչը, որը փայլում էր իւր պարկեշտութիւնով և քաղցր բարքով և զարդարուած էր Աստուծոյ շնորհքով, իմանալով իւր հօր, Անակի գաւաճանութիւնը Խոսրովի դէմ և այն վնասները և չարութիւնները, որը հասան ալդ պատճառով նորա ընտանիքին և Հայաստանին, կամեցաւ մի կերպով քաւել իւր հօր յանցանքը, ուստի թողնելով իւր ընտանիքը Կեսարիայում, ինքը գնաց Հռովմ և ծառալ մտաւ Տրդատի մօտ, չը յալտնելով իւր ով և ում որդի լինելը: Նա ախսիսի հնագանդութեամբ և հաւատարմութեամբ ծառալում էր Տրդատին, որ շուտով սիրելի եղաւ նորան:

Տրդատը էր շատ քաջ երիտասարդ, վարժ և յաջողակ զէնք բանացնելու մէջ, կորովի և հմուտ ձի նստող, և ախոյնան դուրս գալով կրկէսի մէջ միշտ յաղթող էր յանդիսանում ամենագիտար մարզմունքների և խաղերի մէջ: Շուտով Տրդատը մեծ անուն ստացաւ Հռովմում իւր զարմանալի քաջութիւններով, մանաւանդ երբ փառաւոր յաղթութիւն ունեցաւ Հռովմայեցոց տէրութեան վերայ յարձակուած թշնամիների դէմ: Տրդատը իւր այս յաղթութիւնով այնչափ սիրելի եղաւ Թիոկետիանոս կալսրին, որ սա իմանալով Տրդատի պատմութիւնը և Հայոց թագաւորի որդի լինելը, իսկոյն թագ կապեց նորա գլխին և մեծ պատուով ու բազմաթիւ զօրքով ուղարկեց նորան Հայաստան 286 թուին Փրկչի:

Հայոց նախարարները և ժողովուրդը, որք ճնշուած հեծեծում էին Պարսկաստանի բարբարոս բռնակալութեան տակ, մեծ սիրով և պատուով ընդունեցին իւրեանց հարազատ թագաւորը: Տրդատ՝ ուրախացած այսպիսի ընդունելութիւնից և յաջողութիւնից, հարկաւոր համարեց, իբրև կռապաշտ, շնորհակալութեան զոհ մատուցանել չաստուածներին, ուստի գնաց իւր զօրքով և ժողովրդի մեծ բազմութիւնով Եկեղեց գաւառի Երիգա կամ Երգնկա աւանը, ուր կար Հայոց գլխաւոր չաստուածուհու, Անահիտի արձանը և մեհեանը (կռատուն): Ալստեղ մեծ հանդէսներ կատարելու ժամանակ՝ Տրդատը հրամայեց իւր հաւատարիմ և սիրելի ծառալ Գրիգորին ծաղիկներից հիւսած պսակներ և փունջ երտանել նուիրել չաստուածուհուն իւր—Տրդատի կողմից: Բայց Գրիգոր Լուսաւորիչը, ինչպէս առաջ ասացի, մանկութիւնից մեծացած լինելով քրիստոնէական հաւատի մէջ և ինքն շատ ջերմեռանդ և հաստատ քրիստոնեալ, հրաժարուեցաւ կատարել թագաւորի հրամանը, ամենայն համարձակութեամբ յալտնելով՝ որ իբրև քրիստոնեալ պաշտում է ճշմարիտ Աստուածը և անշունչ կուռքերին երբէք երկրպագութիւն չի անի: Լսելով այսպիսի յանդուգն պատասխան իւր հաւատարիմ ու հնագանդ ծառալից, Տրդատը մնաց զարմացած և ապշած, և սաստիկ բարկանալով, հրամայեց կապել և բանտը գնել նորան:

Միւս օրը Տրդատը բերել տուեց Գրիգոր Լուսաւորիչը բանտից և սկսեց համոզել և հրամայել նորան, որ ուրանայ քրիստոնէութիւնը և պաշտէ կուռքերը, խոստանալով մեծամեծ պարգևներ: Բայց Գրիգոր Լուսաւորիչը վստահութեամբ մերժում էր թագաւորի խօսքերը, ցոյց էր տալիս կռապաշտութեան ստութիւնը և անպիտանութիւնը և գովաբանում էր քրիստոնէական հաւատը ինչպէս ճշմարիտ

Աստուծոյ հաւատ: Տեսնելով որ խոստմունքներով և հրամաններով Դրիգոր Լուսաւորիչը չէ ուրանում իւր հաւատը, Տրդատը սաստիկ բարկացած հրամայեց սարսափելի տանջանքներով չարչարել նորան: Տրդատի քարտուղար (զրագիր) Ագաթանգեղոսը, որը իւր աչքով տեսել էր Դրիգոր Լուսաւորչի չարչարութիւլը, նկարագրում է իւր պատմութեան մէջ տասն և երկու ամենասարսափելի չարչարանքներ: Դուք, սիրելիք, երբ ինքներդ կը կարդաք ալդ չարչարանքների պատմութիւնը, կը զարմանաք թէ Դրիգոր Լուսաւորիչը ինչպէս կարողացել է դիմանալ նոցա և կենդանի մնալ: Խոկ ալժմ ես կասեմ ձեզ, որ Ամենակարող Քրիստոս Աստուածը, որի քաղցր սիրոյ համար Գրիգոր Լուսաւորիչը նահատակվում էր, տալիս էր նորան համբերութիւն և զօրութիւն: Գրիգոր Լուսաւորիչը ոչ միայն չէր նեղանում, այլ որքան սաստկացնում էին նորա չարչարանքները, այնքան աւելանում էր նորա ջերմեռանդութիւնը և անդադար բարձր ձայնով փառալբանում էր իւր Արարչի անունը և գովում էր քրիստոնէական մաքուր և սուրբ հաւատը:

Թագաւորը և նախարարները, ժողովուրդը և մանաւանդանիրաւ գահիները, որոնք այնպէս անդութ և կատաղած կերպով կատարում էին չարչարանքները, զարմանում էին Գրիգոր Լուսաւորչի ալսպիսի համբերութեան և կենդանի մնալու վերալ: Եւ երբ զայրացած Տրդատը լուսահատութեամբ մտածում էր հնարել աւելի սարսափելի չարչարանքներ նորա համար, իմացաւ որ նա իւր հայր Խոսրով թագաւորը սպանող Անակի որդին է: Այս պատճառով արդէն անհնարին կերպով բարկանալով Գրիգոր Լուսաւորչի վերայ, Տրդատը հրամայեց կապած ոտներով և ձեռքերով տանել նորան Արտաշատ քաղաքը և ձգել այնտեղ եղած խոր փոսի մէջ: Այս փոսը, որը իւր սաստիկ խորութեան պատճ-

ոռվ կոչվում էր Խոր—Վիրապ, մի սարսափելի տեղ էր: Բոլորովին մութ և խոնաւ հօրը լի էր օձերով և կարիճներով, և ալստեղ ձգում էին ամենածանը լանցաւորները, որ սովամահ լինէին և օձերի ու կարիճների կերակուր դառնային: Ահա այս սարսափելի Խոր—Վիրապի մէջ ձգեցին Գրիգոր Լուսաւորիչը: Բայց ամեն բան իւր բարձր աթոռից տեսնող մեծ Աստուածը տեսնում էր նորա նահատակութիւնը իւր Որդու՝ Քրիստոսի և քրիստոնէական սուրբ հաւատի համար, ուստի իւր ամենակարող զօրութիւնով պաշտպանում էր և մխիթարում էր նորան: Գրիգոր Լուսաւորիչը այն սարսափելի Խոր—Վիրապում, ուր ուրիշ լանցաւորները չէին կարողանում ապրել անդամ հինգ օր, Աստուածալին խնամքով անվնաս և կենդանի մնաց ամբողջ տասն և հինգ տարի: Նոյն Արտաշատ քաղաքումը բնակվող մի ալրի կին Հրեշտակի հրամանով ծածուկ ձգում էր Գրիգոր Լուսաւորչի համար Խոր—Վիրապի մէջ ամենայն օր մի փոքր հաց:

Որովհետեւ Գրիգոր Լուսաւորիչը մեր հոգեսոր հայրնէ, մեր եկեղեցու երկրորդ հիմնադրողն է, մեր աղջի ամենածեծ բարերարն է, զուք պիտի սրտներումդ ուխտ հաստատէք, որ երբ նորա բարեխօսութիւնով և Աստուծոյ օրհնութիւնով կը մեծանաք, անպատճառ գնաք և տեսնէք այն Խոր—Վիրապը, որի մէջ նա անցկացրեց տասն և հինգ տարի ամենադառն նահատակութեամբ մեր սուրբ հաւատի և եկեղեցու համար, և որը կայ մինչև ալժմ: Խոր—Վիրապի վերայ կայ շինած մի գեղեցիկ վանք, որի վանահայրը քաղցը և եղբայրական սիրով կընդունէ և կը պատուէ ձեզ:

բ

Այդ միջոցներին մեր սիրելի հալրենիքում — Հայաստանում պատահեցաւ մի անցք, որը երևելի ազդեցութիւն և նշանակութիւն ունեցաւ իւր հետեանքներով մեր ազգային պատմութեան համար։ Պէտք է ասել որ՝ Տրդատի ժամանակ քրիստոնեաները հալածանք և տանջանք էին կրում իւրեանց ճշմարիտ հաւատի համար կռապաշաներից, ոչ միայն Հայաստանում, այլև ուրիշ շատ երկրներում, մանաւանդ Հռովմում և հռովմէական կայսերութեան մէջ։ Այսպիսի հալածանքներից ազատվելու համար քրիստոնեաները շատ անդամ փախչում էին մի աեղից միւս տեղ, մի երկրից միւս երկիր։

Հռովմ քաղաքում մի վանքի մէջ ճգնում էին միքանի կոյսեր. սոցա մայրապետը կամ մեծը Դալիխանէ կոյսն էր, իսկ ամենից երևելին նոցա մէջ թէ իւր իշխանազն ծագումով և թէ զարմանալի գեղեցկութեամբ էր Հռիփսիմէ կոյսը։ Դիոկղետիանոս կայսը իմանալով Հռիփսիմէի սքանչելի գեղեցկութեան համբաւը՝ կամեցաւ նորան կին առնել իւրեան, բայց այս մաքրակրօն կոյսը կամենալով մինչև իւր մահը մնալ Քրիստոսի հաւատարիմ աղախին՝ միտք չունէր ընդունել կայսերուհու շքեղ փառքը, ուստի իւր մայրապետի և միւս կոյսերի հետ խորհելուց լետով, թողին ամենքը միասին իւրեանց վանքը և միքանի սրբակրօն քահանաների հետ փախան ծածուկ կերպով Հռովմից։ Երկարատե ճանապարհորդութիւններ անելուց լետոյ՝ այս փախատական կոյսերը վերջապէս հասան Հայաստանի սահմաններին և շարունակելով իւրեանց ճանապարհը՝ մօտեցան Վաղարշապատ մայրաքաղաքին, ուր նստում էր ինքն Տրդատ

թագոււորը։ Այստեղ քաղաքից դուրս ալգիների հնձաններում ծածկվելով՝ ապրում էին նոքա ամենախեղճ կերպով։

Դիոկղետիանոսը՝ լսելով Հռիփսիմէի փախուստը իւր ընկերների հետ և հարցափորձ անելով՝ իմանում է որ նոքա հասել են Հայաստանի սահմաններին, ուստի իսկովն թուղթ է դրում իւր բարեկամ և սիրելի Տրդատին, ինդրելով որ՝ նա անպատճառ գտնել տալ Հռիփսիմէին և կամ իւրեան կին առնէ, կամ ուղարկէ Հռովմ։ Տրդատի հրամանով սկսում են պտուել օտարական կոյսերը և վերջապէս գտնում են նոցա Վաղարշապատի ալգիներում։ Լսելով Հռիփսիմէի զարմանալի գեղեցկութեան համբաւը, Տրդատը կամենում է կին առնել նորան և հրամայում է տանել նորան իւր պալատը։ Բայց ջերմեռանդ Հռիփսիմէին չէ համաձայնվում և մեծ հակառակութիւն է ցուցանում թէ ճանապարհին և թէ պալատում։ Ոչինչ խրատ, ոչինչ համազունք, ոչինչ խընդիրք, ոչինչ խոստմունք թագաւորի կողմից չէին կարողանում լաղթել Հռիփսիմէին։ Տրդատը պատվիրում է կանչել մայրապետը և հրամայում է նորան խրատելով համոզացնել Հռիփսիմէին, իսկ նա— Դալիխանէ կոյսը— բարձր ձախով լորդուում է Հռիփսիմէին չը կատարել թագաւորի ցանկութիւնը։ Զայրացած Տրդատը, կատաղութեամբ բորբոքուած, հրամայում է չարշարել Հռիփսիմէ և Դալիխանէ կոյսերը և վերջապէս նահատակելով սպանել նոցա։ Նատ երկար կը լինէր պատմել ձեռ թէ՝ ինչ սարսափելի չարչարանքներ տվին սուրբ կոյսերին։ Այլ կասեմ ձեզ, որ՝ բոլոր նահատակուածները՝ կոյսերը և նոցա հետ եղած քահանաները թւով 37 հոգի էին. առաջին օրը նահատակվեցան Հռիփսիմէն ՅՅ ընկերներով, իսկ երկրորդ օրը՝— Դալիխանէն երկու ընկերներով։ Հռիփսիմէանց և Դալիխանէանց նահատակութիւնը կատարուեցաւ ՅՅ թւրին Փրկչի, հոկտեմբերի 25—ին և 26—ին։ Աւելորդ չէ

որ իմանաք որ՝ մեր եկեղեցին այս սուրբ կուսերի լիշտակը տօնում է գարնան վերջերում (համարեա մէջտ լունիս ամսին) եղիական պատից լետոյ առաջին կիւրակէի երկուշաբթի և երեքշաբթի օրը:

—Տրդատը սաստիկ յափշտակուած լինելով Հռիփսիմէի չեղեցկութիւնով, նորան սպանել տալուց լետոյ ընկաւ խորին տրտմութեան մէջ և սկսեց ցնորվիլ: Միքանի օրից լետոյ կամենալով ցրուել իւր տիրութիւնը՝ նա մեծ հանդէսով գնում էր որս տնելու, բայց Աստուծոյ պատիժը եկաւ հասաւ նորա վերալ և նա խելագարուեցաւ. նորա հետ միասին խելագարուեցան և շատերը նոցանից, որոնք օգնեցին և նահատակեցին սուրբ կոյսերը: Այս խելագարվածները վալրենի գագանների պէս կատաղած թափառում էին անտառների մէջ և լեռների վերալ և խածոտում էին միմեանց կամ իւրեանց մարմինը:

Տրդատի քոյր Խոսրովիդուխտը, որը մի պարկեշտ անձն էր, աստուածալին տեսիլքի մէջ իմացաւ հրեշտակից որ՝ խելագար թագաւորին և միւս ընկերներին չկայ փրկութիւն և քժշկութիւն ուրիշ աեղից, բայց միայն Խոր—Վիրապի մէջ եղած կենդանի նահատակից: Երբ Խոսրովիդուխտը պատմեց իւր տեսիլքը ուրիշներին, ոչ ոք չը հաւատաց նորան, այլ կարծեցին թէ նա ևս խելագարվել է, որովհետեւ ամենևին չէր կարելի հաւատալ որ՝ այնքան տարի մի մարդ կենդանի մնար սարսափելի Խոր—Վիրապում: Բայց երբ տեսիլքը կը կնուեցաւ միքանի անգամ, այն ժամանակ Օտա նախարարը հրաման ստացաւ գնալ Արտաշատ և հանել նորան Վիրապից, եթէ կենդանի է: Օտան բազմաթիւ մարդիկներով պատած՝ հաստ պարան իջացրեց Վիրապի մէջ և ձայն տուեց: Ա. Գրիգորը շարժեց սարանը և նորա ծայրը իւր մէջքի վերալ կապելով՝ հանեցին նորան սարսափելի Վիրապից:

Փտած և բորբոսած հագուստը, երկար և սպիտակ մազերը գլխի և մօրուքի, սեացած և նիհարացած երեսը սարսափեցրին բոլոր տեսնողները և շարժեցին նոցա կարեկցութիւնը և աչքի արտասուքը: Շուտով լուացին և մաքրեցին նորան և պատուական հանդերձներով զարդարած մեծ պատուով տարան Վաղարշապատ: Այս պատահեցաւ նոյնպէս 301 թ. վերջերում:

Լսելով Ս. Գրիգորի կենդանութեան գարմանալի լուրը և իմանալով նորա գալուստը, բոլոր նախարարները մեծ հանդէսով ընդառաջ գնացին նորան. խելագարուած Տրդատը և նորա ընկերները նոյնպէս շտապեցին ընդառաջ: Նախարարները և ժողովուրդը սկսեցին բարձր ձայնով ներողութիւն և թողութիւն խնդրել Ս. Գրիգորից, աղաչելով որ՝ շուտով բժշկէ խելագարուածները: Զերմեռանդ աղօթելուց և խելագարուածները զգաստացնելուց լետոյ, Ս. Գրիգորը շտապեց ժողովել սուրբ նահատակ կոյսերի մարմինները, որոնք իննը օր և գիշեր մնացել էին բոլորովին անվնաս և անփոլտ: Այնուհետեւ սկսեց նա քարոզել ամենեցուն զըզջալ մեղքելի համար, քաւել և ապաշխարել և այնպէս հեռացնել Աստուծոյ բարկութիւնը և վերստին. արժանանալ նորա ողորմութեան: Պատուիրելով նոցա ծոմով, պատով և աղօթքով պարապել, ամբողջ նՅ օր քարոզում էր նա Աստուածալին բանը աշխարհի ստեղծագործութիւնից սկսած մինչեւ Քրիստոսի մարդանալը, նորա քարոզութիւնները և հրաշագործութիւնները, չարչարանքը և մահը, յարութիւնը և համբարձումը, առաքեալների գնալը զանազան աշխարհներ, թադէսոսի և բարդուղիմէոսի Հայաստան գալը, Աբդարի մկրտութիւնը ևալն:

Այդ միջոցներին Ս. Գրիգորը երեք վկայարան շինեց Ս. Հռիփսիմեանց նահատակված տեղերում, որոնք լետոյ

կոչուեցան Հռիփսիմէ, Գալիխանէ և Շողակաթ վանքնը. միւնոյն ժամանակ նա պարսպով պատեց այն տեղը, որը հրաշալի տեսիլքով ցոյց տուեց նորան հրեշտակը և որի վերալ յետոյ շինեց նա այն հռչակաւոր տաճարը, որը կոչուեցաւ Էջմիածին: Այս բոլոր շինութեանց մասնակցում էին Տրդատը և նորա ընտանիքը, պալատականները, նախարարները և ժողովուրդը, ոչ միայն այլ և այլ պարագաներով, այլ անձնական աշխատութեամբ, կրելով քարեր, հող, ջուր և այլն:

Կամենալով բոլոր Հայաստանի մէջ հալածել և ցրվել հեթանոսութեան խաւարը և սփոել քրիստոնէական վարդապետութեան լուսը, Ս. Գրիգոր Լուսաւորիչը սկսեց շաղել զանազան զսւառներում, քարոզել Աւետարանը և քանդել կուռքերի մէհեանները (աղօթարանները) կանգնացնելով նոցա տեղ վրկութեան խաչը: Տեսնելով որ բաւականին պատրաստուեցաւ ժողովուրդը քրիստոնէութիւն ընդունելու համար, սուրբ Գրիգորը առաջարկեց Տրդատին և ժողովրդին ընտրել մի արժանաւոր մարդ իւրեանց համար հովիւ և առաջնորդ, որը կարողանալ մկրտել նոցա: Թագաւորը ժողովեց բոլոր նախարարները, գաւառապետները և միասին խորհրդակցելով՝ վճռեցին նոյն ինքն կենդանի նահատակը կարգել իւրեանց հովիւ և առաջնորդ: Ս. Գրիգոր Լուսաւորիչը համեստութեամբ հրաժարուեցաւ այդպիսի քարձր պատուից, բայց երբ թագաւորը և ժողովուրդը շատ խնդրեցին՝ համաձայնեցաւ:

Հայաստանի մէջ քրիստոնէական հաւատը, հաստատած Թագէոս և Բարդուղիմէոս առտքեալների քարոզութեամբ, թէպէտ փոքր առ փոքր նուազում էր մինչև սուրբ Գրիգոր Լուսաւորիչը, բայց բոլորովին չէր վերջացել: Նատ տեղերում, ինչպէս Կեսարիա քաղաքում, որը մի ժամանակ կազմում էր մեր ընդարձակ հայրենիքի մի մասը, քրիստոնէու-

թիւնը կար անխափան և ալստեղ Թագէոս առաքեալի աշակերտ Թէղփիլոս եպիսկոպոսից լետոյ շարունակաբար լաջորդում էին զանազան եպիսկոպոսներ միմեանց: Գրիգոր Լուսաւորիչը, որը մեծացած էր Կեսարիայում, շատ լաւ գիտեր այդ, ուստի հարկաւոր համարեց գնալ տեղ և նորա եպիսկոպոսից—իբրև Թագէոս առաքեալի անընդհատ լաջորդից—ստանալ իւր ձեռնադրութիւնը: Ուրեմն բոլորովին սխալ է այն կարծիքը, որով միքանի մարդիկ կամեցել էին մի ժամանակ հաստատել թէ՛իբը Հայոց ազգը ստացել է իւր հաւատը լունաց ազգից և թէ՛ հայոց եկեղեցին է մի ճիւղ լունաց եկեղեցու: Ընդհակառակը՝ հայոց եկեղեցին է անդրանիկ քրիստոնէական առաքելահաստատ եկեղեցի, ինչպէս ալժմ ընդունում են և լուսաւորուած ազգերը:

Տրդատ թագաւորը մեծ և շքեղ հանդէսով ճանապարհ ձգեց սուրբ Գրիգոր Լուսաւորիչը: Նա նստած էր արքունական սոկիապատ կառքի մէջ սպիտակ ջորիներով լծած, բազմաթիւ նախարարները և թիկնապահները ուղեկցում էին նորան: Ճանապարհին ամենայն տեղ մեծ ընդունելութիւն էր գտնում նա և մեծ ուրախութիւն էր պատճառում ժողովրդին: Կեսարիայի Ղեռնդ եպիսկոպոսը, որին Տրդատը ուղարկել էր թանկադին ընծաներ և նամակ բոլոր անցքերի նկարագրութեամբ, մեծ պատուվ և լարգանքով ընդունեց սուրբ Գրիգորը: Նա իսկոյն ժողով գումարեց եպիսկոպոսներից և սուրբ Գրիգորը ձեռնադրեցին Հայաստանի քահանայիցեաւ:

Աւելի շքեղ և փառաւոր հանդէսով կատարուեցաւ Գրիգոր Լուսաւորիչի վերադառնալը. ժողովուրդը խուռն բազմութեամբ ամենայն տեղ ընդառաջ էր գնում և մեծ պատկառանքով շտապում էր համբուրել սուրբ հայրապետի օծեալ աջը: Վերադառնալիս (ինչպէս և Կեսարիա գնալիս),


Լուսաւորիչը ամենայն տեղ ճանապարհին քարոզում էր ժողովրդին, քանզում էր մեկեանները, հիմնարկում էր եկեղեցիներ և կարգում էր քահանաներ, իսկ մեկեանների կալուծները տալիս էր եկեղեցիներին: Վերադառնալիս հիմնարկած եկեղեցիների մէջ ամենից նշանաւորն է Տարօն գաւառի սուրբ Կարապետը, որը յետոյ կոչուեցաւ Գլակալ վանք և որը մինչև այժմ համարվում է երեւելի ուխտատեղի, որովհետեւ այստեղ ամփոփեց նա Ղետնդ եպիսկոպոսից ստացած սուրբ Յովհաննէս Մկրտչի նշանալից մի ժամը:

Լսելով սուրբ Գրիգորի գալուստը՝ Տրդատ թագաւորը իւր բոլոր ընտանիքով, նախարարներով և բազմաթիւ զօրքով ընդուած գնաց նորան մինչև Բագրեանդ գաւառի Բագուան քաղաքը: Ալսաեղ սուրբ Գրիգորը դարձեալ սկսեց իւր քարոզութիւնը և պահով ու աղօթքով զբաղեցրուց ամենեցուն. յետոյ մեծ և շքեղ հանդէսով մկրտեց Եփրատ գետում թագաւորը, Աշխէն թագուհին և Խոսրովիդախար, նախարարները, զօրքը և անթիւ բազմութիւն ժողովրդեան: Եօթը օր շարունակում էր նա իւր օգնականներով ժողովրդի մկրտութիւնը, և բոլոր մկրտուածների թիւը հասաւ մինչև չորս միլիոնը, ինչպէս վկայում է ականատես պատմագիր Ադաթանգեղոսը: Տրդատի անունը մկրտութեան ժամանակ փոխեց սուրբ Գրիգորը և կոչեց նորան Յովհաննէս ի պատիւ Յովհաննէս Մկրտչի:

Նորահաւատ թագաւորի և նախարարների հետ շքեղ հանդէսով վերագանալով Վաղարշապտա, Ա. Գրիգորը սկսեց ՅՈՅ թ. Փրկչի շինել մի մեծ և հոյակապ եկեղեցի այնտեղ, որը առաջ հրեշտակի ցուցմամբ պարսպապատել էր, ինչպէս փոքր ինչ առաջ լիշեցի, և որը դարձաւ Հայաստանի մայր եկեղեցի կաթուղիկէ սուրբ Եջմիածին: Ուրեմն սուրբ

Եջմիածնի շինութիւնից մինչև այսօր անում է 1583 տարի: Այնուհետև Գրիգոր Լուսաւորիչը սկսեց մեծ բարեկարգութեամբ զարդարել Հայաստանեաց եկեղեցու կառավարութիւնը. նա շրջում էր բազմաթիւ գաւառներում, ամենայն տեղ մկրտում էր ժողովուրդը, շինում էր եկեղեցիներ, ձեռնադրում էր քահանաներ, հաստատում էր դրաբոցներ, մանաւանդ քուրմերի (կռապաշտների քահանաների) որգոց համար, որոշում էր եկեղեցիների և ուսումնարանների համար հողեր և կալուածներ, հոգևորականների համար տասանորդ և այլ տեսակ արդիւնքներ պտուղներից, ցորենից և միւս բոլորից: Վերջապէս բոլոր Հայաստանը բաժանեց նա միքանի գլխաւոր վիճակներ և ամենայն աեղ կարգեց առաջնորդ եպիսկոպոսներ և քորեպիսկոպոսներ: Եւ այսպէս տարածելով բոլոր Հայոց երկրի մէջ աւետարանի պայծառ և ճշմարիտ լոյսը՝ սուրբ Գրիգորը արժանապէս պատւցաւ Լուսաւորիչ փառաւոր անունով, որը վայելաւմ է նա մինչև այժմ բոլոր քրիստոնեալ ազգերի մէջ: Պէտք է աւելացնել որ՝ Գրիգոր Լուսաւորչին բոլոր գործերի մէջ օգնական և գործակից էր և ինքն Տրդատ—Յովհաննէս թագաւորը, որը մինչեւ անգամ արքայական հրովարտակով արգելեց կռապաշտութիւնը և հրամայեց բոլոր ազգին ընդունել անպատճառ քրիստոնէութիւնը:

Ա.մբողջ տասն և չորս տարի անխոնջ և քրտնաշան աշխատութեամբ՝ իբրեւ արթուն և անձնանուէր հովուապետ իւր սուրբ եկեղեցու և սիրելի ազգի՝ կառավարելով եկեղեցական գործերը, Գրիգոր Լուսաւորիչը սկսեց երեմն երեմն Հեռանալ աշխարհից և ճգնել անապատ ու լեռնոտ տեղերում կամ առանձին և կամ ճգնաւորների հետ: Շրջելով մէկ անապատից գէպի միւս անապատ, նա մի անգամ պատահմամբ հանդիսացաւ Դարանաղեաց գաւառի Սեպուհ



լերան վերայ սուրբ կոյս Մանէին, որը սուրբ Հռիփսիմեանց հետ միասին փախել էր Հռովմից և գալով Հալաստան ճըգնում էր ալնտեղ մի ալրի մէջ։ Մանէ կոյսը ընկղմած էր ծանր տկարութեան մէջ և վախճանուեցաւ երեք օրից լետոյ։ Դրիգոր Լուսաւորիչը թաղեց նորան և ինքն մնաց նորա ալրի մէջ ճգնելու։ Բայց չափազանց սիրելով իւր ժագաւորը և ժողովուրդը՝ Ս. Դրիգոր Լուսաւորիչը երբեմն երբեմն գնում էր Տրդատի մօտ և կամ շրջում էր գաւառներում։ Թէպէտ թագաւորը և ժողովուրդը, մանաւանդ եպիսկոպոսները և քահանաները միշտ խնդրում էին նորանից չը հեռանար, այլ միշտ մնալ նոցա մէջ, բայց երանելի հալրապետը չը համաձայնվում և դարձեալ վերադառնում էր իւր ճգնելու տեղը։

Մինչեւ այդ միջոցները դեռ ոչ ոք չը գիտէր թէ Դրիգոր Լուսաւորիչը որդիք ունի և ինքն էլ ոչ ոքին չէր լայտնում այդ։ Բայց Արտաւազդ Մանդակունի նախարարը իմանալով իւր փեսայ Տաճատից, որը մի ժամանակ Կեսարիայումը ապրելով ծանօթ էր նորա կեանքի հանգամանքների հետ, թէ՝ Ս. Դրիգոր Լուսաւորիչը ունի երկու որդիք՝ Վ. Բթանէս և Արիստակէս, լայտնեց այն թագաւորին։ Տրդատը հրամայեց իսկոյն պտռել նոցա և արդարեւ գտան Վ. Բթանէսը Կեսարիայում, իսկ Արիստակէսը մի անապատում, և հազիւ հազ կարողացան համոզել նոցա զնալ թագաւորի մօտ։ Տրդատը շատ ուրախացաւ և մեծ պատուով ընդունեց նոցա և լետոյ նոցա հետ միասին զնաց պտռելու Ս. Դրիգոր Լուսաւորիչը։ Պտռելով նորան վերոլիշեալ Մանեայ ալր ճգնարանում, թագաւորը խնդրեց նորանից կամ շարունակել իւր քահանայապետական գործունէութիւնը և կամ Արիստակէսին տալ եպիսկոպոսական աստիճան և կարգել իւր փոխանորդ։ Ս. Դրիգոր Լուսաւորիչը ընդունեց ալս երկրորդ խըն-

դիրքը՝ գնաց Վաղարշապատ և այնտեղ Արէստակէսը եպիսկոպոս ձեռնադրելով սկսեց շրջել նորա հետ զանազան քաղաքներում և գաւառներում, և այցելութիւն անել իւր ժողովրդին, իսկ լետոյ դարձեալ գնաց իւր ճգնելու տեղը։

Այդ միջոցներին լուսաւորուեցաւ Քրիստոսի լուսով և մեր ազգակից հարևան Վ. Բթաց ազգը սուրբ Նունէ կոյսի ձեռքով, որը նոյնպէս սուրբ Հռիփսիմեանց ընկերութիւնից էր և գնացել էր Վ. Բթաստանի կողմերը։ Այս կոյս քարոզիչը մարդիկ ուղարկեց Դրիգոր Լուսաւորչի մօտ եւ լայտնեց նորան Վ. Բթաց ազգի դարձը քրիստոնէութիւնը, իսկ նոցա Միհրան թագաւորը գեսպաններ ուղարկեց Տրդատի մօտ և խընդրեց նորանից եպիսկոպոսներ և քահանաներ իւր երկրում քրիստոնէութիւնը հաստատելու համար։ Դրիգոր Լուսաւորիչը և Տրդատ թագաւորը շտապեցին կատարել այդպիսի բարի խնդիրը և իսկոյն ուղարկեցին եպիսկոպոսներ և քահանաներ, որք մկրտեցին Միհրանը և նորա ժողովուրդը և հաստատեցին Վ. Բթաստանում քրիստոնէական եկեղեցի։

Միկնոյն միջոցներում Յունաց եկեղեցում ծագեցաւ խովութիւն և հերետիկոսական մոլար վարդապետութիւն սուրբ Երրորդութեան դէմ։ այդ մոլորութեան քարոզիչն էր Աղէքսանդրիա քաղաքի սարկաւագ և լետոյ քահանայ Արիստակէսը։ Յունաստանի Կոստանդին կալսորը շատ եպիսկոպոսների խնդիրքով եկեղեցական ժողով գումարեց Բիւթանիալի Նիկիա քաղաքում 325 թ. Փրկչի, Արիստակէսը սուր և մոլար հերետիկոսութիւնը ջնջելու համար։ Իհարկէ ալս ժողովում հրաւիրուեցաւ և մեր Ս. Դրիգոր Լուսաւորիչը, բայց փախչելով փառասիրութիւնից՝ ինքն չը գնաց, այլ ուղարկեց իւր որդի Արիստակէս եպիսկոպոսը։ Նիկիոյ ժողովում հաւաքուեցան զանազան երկիրներից 318 հալրապետներ, որոնց մէջն էր և մեր Արիստակէս եպիսկոպոսը և միասին քննելով Արիս-

սի հերետիկոսութիւնը՝ ջրեց այն և նզովեց նորան, հաստատելով քսան գլուխ կանոն և այն երեւլի աղօթքը, որ կոչվում է Հանդանակ հաւատոյ, կամ «Հաւատամք» և որը դուք վաղուց պէտք է որ բերան գիտենաք: Նիկիոյ ժողովը կոչվում է առաջին տիեզերական ժողով:

Երբ Ա.րիստակէս եպիսկոպոսը վերադարձաւ Նիկիոյ ժողովից՝ բերելով իւր հետ նորա սահմանած քսան կանոնը և հաւատոյ հանդանակը, Ա. Գրիգոր Լուսաւորիչը հայոց եպիսկոպոսներից եկեղեցական ժողով գումարեց Վաղարշապատում և քննելով ու համոզուելով հանդանակի ուղղափառութեան մէջ՝ ընդունեցին այն. ինքն Լուսաւորիչը աւելացրեց իւր կողմից Հանդանակի վերայ «Իսկ մենք փառաւորեսցուք» աղօթքը, որը միշտ կարդացվում է մեր եկեղեցում Հաւատամքից լետոյ:

Այսուհետեւ Ա. Գրիգոր Լուսաւորիչը բոլորովին առանձնացաւ և ճգնում էր առաջ Տարօն գաւառի Գլակայ կամ Ա. Կարապետ վանքում, իսկ լետոյ Դարանաղեաց Մանեայ ալրի մէջ, և աւելի չերեւեցաւ ոչ ոքին, ուր և հրեշտակալին առաքինութեամբ պարապելով անդադար աղօթքով և սաղմոսասացութեամբ կնքեց իւր արդար կեանքը մօտ 332 թուին Փրկչի: Ա.Գրիգոր Լուսաւորիչը ապրեցաւ մօտ 74 տարի, ամբողջ 30 տարի քրտնաջան աշխատութեամբ կատարեց նա իւր առաքելական գործը՝ պարգևելով Հայոց ազգին բոլորովին նոր կեանք թէ հոգեւոր ու թէ մարմնաւոր: Նորա մարմինը գտան հովիւները և չիմանալով թէ ով է նա՛թաղեցին իւր տեղում՝ քարակուլու դիզելով գերեզմանի վերայ: Ետք ժամանակներից լետոյ մի Գառնիկ անունով ճգնաւոր գտաւ Աստուածալին ազգարարութեամբ սուրբ Լուսաւորչու մարմինը նոյն տեղում և տարաւ ամփոփեց Թորդան գիւղում: Յետոյ բերին այս սուրբ մարմինը Վաղարշապատ և

գրին հայրապետական եկեղեցու մէջ (Եջմիածին), իսկ երբ հայրապետական աթոռը Դուին քաղաքը փոխադրուեցաւ, տարան այնտեղ: Բաւականին ժամանակից լետոյ Ս. Գրիգոր Լուսաւորչի հրաշագործ նշխարները սփուռեցան զանազան տեղերում, մինչեւ անգամ Կ. Պօլսում և Խտալիայում: Ալժմ Ս. Եջմիածնում գտանվում է շատ սրբութեանց հետ միասին և սուրբ Գրիգոր Լուսաւորչու սուրբ աջը, որի հրաշագործութիւնները և երկար ճանապարհորդութիւնները ունին իւրեանց առանձին ընդարձակ պատմութիւններ:

Ս. Գրիգորը ունի գրած շատ ճառեր, որք միասին կոչվում են Յաճախապատում և իբրև մի գիրք տպագրուած է վերջին ժամանակներս:

—Սիրելի զաւակներս, աւարտելով մեր բազմերախտ ընդհանուր հօր —Ս. Գրիգոր Լուսաւորչու պատմութիւնը, աղօթելով խնդրենք և աղաչենք նորանից որ՝ միշտ և հանապազ անպակաս անէ մեզանից իւր օրհնութիւնը և բարեխօս լինի Յիսուս Քրիստոսի առաջև պարգևել իւր ձեռքով վերահաստատած և կենդանացրած Հայաստանեալց եկեղեցուն պայծառութիւն, Հաստատութիւն և յաւիտենական յարատեկութիւն, և իւր հոգեբուխ քարոզութեամբ քրիստոնէական լուսով լուսաւորուած Հայոց ազգին երջանիկ օրեր:

¶

Գրիգոր Լուսաւորչու մահից յետոյ կաթողիկոս ընտըր-
ւեցաւ իւր որդի Արիստակէսը, կամ ինչպէս ոմանք կոչում
են Ուրբատակէսը:

Արիստակէսը Լուսաւորչու երկրորդ որդին էր և ծնուեցաւ
Կեսարիալում, ինչպէս ձեզ արդէն յայտնի է: Նորա ծննդից
յետոյ Ս. Գրիգորը և իւր կին Մարիամը յօժար կամքով բա-
ժանուեցան միմեանցից — Ս. Գրիգորը գնաց Հռովմ Տրդա-
տի մօտ, իսկ Մարիամը մտաւ կանանց վանքը, տանելով
իւր հետ և մի տարեկան Արիստակէսը (Վրթանէսը մնաց
Կեսարիալում իւր գայեակի մօտ): Այսուղ Արիստակէսը մե-
ծացաւ կրթութիւն ստանալով առաքինի, վանական և Աս-
տուածապաշտ կեանքի մէջ, Մանուկ Արիստակէսը այն աս-
տիճան սիրեց Աստուածը, սուրբ Հաւատը և վանական կեան-
քը որ՝ գնաց Նիկոմաքոս անունով ճգնաւորի մօտ և եղաւ
կրօնաւոր: Յետոյ նա այնտեղից ևս հեռացաւ և գնալով մի
անապատ՝ սկսեց ճգնել շատ խիստ կերպով: Այդ իսկ ժա-
մանակն էր որ Տրդատ թագաւորը, ինչպէս արդէն պատմե-
ցի, իմանալով թէ Գրիգոր Լուսաւորիչը որդիք ունի, մար-
դիկ ուղարկեց նոցա գտնելու համար: Երբ Արիստակէսը դը-
տան անապատում, նա չէր կամենում գնալ թագաւորի մօտ
փախչելով փառքից, և թագաւորի մարդիկը մեծ դժուարու-
թիւնով հաճեցրին նորան:

Տրդատը մեծ պատուով և ուրախութեամբ ընդունեց
Արիստակէսը և Վրթանէսը և շուտով տարաւ նոցա Ս. Գրի

գոր Լ. մօս՝ Դարանաղեաց Սեպուհ լեառը, ուր ճգնում
էր նա Մանեալ ալբումը: Թէ ինչպէս Լուսաւորիչը կատա-
րեց այդ, թէ ինչպէս Արիստակէսը գնաց յետոյ իրեւ եպիս-
կոպոս և Լուսաւորչու փոխանորդ՝ Նիկիոյ առաջին տիեզե-
րական ժողովը, թէ ինչպէս բերեց նա այն տեղից Հաւատի
Հանգանակը կամ Հաւատամքը և թէ ինչպէս նա դորանից
յետոյ օգնում էր իւր հօրը և կառավարում էր Հայաստա-
նեալց եկեղեցու գործերը, այդ բոլորը դուք արդէն գիտէք
Լուսաւորչու պատմութիւնից: Այժմ միայն կաւելացնեմ, որ
երբ Ս. Գր. Լուսաւորիչը բոլորովին առանձնացաւ, Արիս-
տակէսը ընտրուեցաւ ընդհանուր Հայոց կաթողիկոս ՅՅՅ թ.
Փրկչի: Այսուհետեւ Արիստակէսը աւելի մեծ ջանքով սկսեց
հոգուել իւր ժողովուրդը, ամենայն տեսակ բարեկարգութիւն-
ներով զարդարեց Հայաստանեալց ոուրը եկեղեցին, ընտիր և
արժանաւոր հոգևորականներով միիթարեց ժողովուրդը և
իւր առաքինի ու սուրբ վարքով, իւր իմաստուն կառավա-
րութիւնով ամենին սիրելի եղաւ և օրինակ: Նա անդադար
շինում էր վանքեր և եկեղեցիներ, ինչպէս օրինակ մի մեծ
եկեղեցի շինեց Ծոփաց աշխարհի (նահանգ) Խոզան գիւղա-
քաղաքում, և միշտ քարոզում էր ժողովրդին Քրիստոսի
ճամարիտ վարդապետութիւնը և առաքինութեան արժանա-
ւորութիւնները:

— Բայց որպէս հետեւ քրիստոնէութիւնը դեռ չէր հաս-
տատուել բոլորովին Հայաստանի մէջ, շատերը ժողովրդից և
մանաւանդ նախարարներից շեղվում էին ուղիղ ճանապար-
հից և ճշտութեամբ չէին կատարում իւրեանց քրիստոնէա-
կան պարտաւորութիւնները: Արիստակէս կաթողիկոսը ամե-
նայն ինամքով խրատում էր նոցա և աշխատում էր ուղղել,
իսկ որոնք չէին կամենում ուղղուիլ՝ նոցա յանդիմանում էր

և նախատում էր իբրև սուսեր հոգեոր, ինչպէս կոչում է նորան Մովսէս Խորենացին: Այդ պատճառով շատերը թշնամացան սուրբ Հայրապետին, որոց մէջ էր և Զորորդ Հայոց իշխանը Արքեղայոս անունով, որովհետեւ սորան աւելի մեծ խստութեամբ նախատում էր Արիստակէսը իւր վատ գործերի համար: Այս Արքեղայոսը չար միտք դրաւ իւր սրտի մէջ վնասել Հայրապետին, բայց սպասում էր յարմար միջոցին, և երբ Արիստակէսը գնաց Ծոփաց գաւառը, Արքեղայոսը ճանապարհին յանկարծ յարձակուեց նորա վերալ և սպանեց նորան, իսկ ինքը փախաւ Կիլիկիայի կողմերը: Սուրբ նահատակի մօտ եղած մարդիկ և մանաւանդ նորա աշակերտները վերցրին նորա մարմինը և տարան եկեղեաց գաւառը և թաղեցին Թիլ աւանում: Այս Թիլը Տրդատը պարզեց էր Ս. Գրիգոր Լուսաւորչին իբրև սեպհական կալուածք, և ինքըն Արիստակէսը շինել էր այստեղ իւր բնակութեան համար մի վանք, ուրեւ թաղուեցաւ:

— Արիստակէս Հայրապետը իւր հօր Ս. Գրիգոր Լուսաւորչի առանձնանալուց յետոյ կաթողիկոսութիւն վարեց միայն եօթը տարի, այսինքն 332—Եց մինչև 339 թ. Փրկչի, ապրելով մօտ 60 տարի, որովհետեւ ծնուեցաւ 280 թուին:

¶

Արիստակէսի մահից յետոյ կաթողիկոս ընտրուեցաւ իւր եղբայր Վրթանէսը:

— Վրթանէսը նոյնպէս ծնուեցաւ Կեսարիայում: Երբ նորա հայրն ու մայրը, այսինքն Ս. Գրիգոր Լուսաւորչը և նորա կին Մարիամը միմեանցից բաժանուեցան և երբ Գրիգորը գնաց Հոռվմ Տրդատի մօտ, իսկ Մարիամը մտաւ վանքը՝ տանելով իւր հետ մի տարեկան Արիստակէսը, Վրթանէսը մնաց Կեսարիայում իւր դայեակի մօտ, ինչպէս ասացի վերև: Զափահաս դառնալով՝ Վրթանէսը ամուսնացաւ Կեսարիայում և ունեցաւ երկու որդի—Գրիգորիս և Յուսիկ անունով: Երբոր Տրդատ թագաւորը կանչեց իւր մօտ Վրթանէսը և Արիստակէսը, երկուսին ևս մեծ պատիւ և ընդունելութիւն ցուցեց, իսկ Արիստակէսի մահից յետոյ, ինչպէս ասացի, կաթողիկոս ընտրուեցաւ Վրթանէսը: Յայտնի չէ՝ սա երբ ստացաւ եպիսկոպոսական աստիճան—արդեօք իւր հօրից, թէ եղբօրիքց:

— Կաթողիկոս դառնալով՝ Վրթանէսը իւր հօրից և եղբօրից սլակաս չէր թէ իւր առաքինի և բարեպաշտ վարքով և թէ մանաւանդ իւր Զերմեռանդութեամբ և փութաջանութեամբ, որով հովվում էր իւր հօտը, հաստատում էր եկեղեցիներ և պայծառացնում էր Հայաստանեալց եկեղեցին: Կամենալով աւելի հիմնաւոր բարեկարգութիւն տալ եկեղեցուն՝ Վրթանէս Հայրապետը քահանաներ ուղարկեց Երու-

սաղէմի Մակարիս պատրիարքի մօտ և աեղեկութիւններ հարցը եց եկեղեցական խորհուրդների, ծէսերի, պաշտամունքների և մանաւանդ եկեղեցական դասի բարեկարգութեան մասին: Մակարիսը մեծ ուրախութեամբ և պատուվ ընդունեց Հայոց ազգի հայրապետի այդպիսի առաջարկութիւնը, իսկոյն ժողովեց միքանի եպիսկոպոսներ և նոցա հաւանութեամբ մի կանոնական թուղթ գրեց և ուղարկեց Վրթանէսին: Ալդ թուղթը պարունակում էր իւր մէջ ինը կանոն, որք բացատրում են թէ որտեղ և ինչպէս և ում ձեռքով պիտի կատարուի մկրտութեան խորհուրդը և սուրբ պատարագը, ինչպէս պէտք է կառավարեն հոգեորականները և մանաւանդ եպիսկոպոսները իւրեանց ժողովուրդը և ալլն: Այս կանոնները մնացել են մեր հին ձեռագիր կանոնագրքերի մէջ, որք կան շատ տեղերում և մանաւանդ մեր սուրբ Մայր Աթոռ Եջմիածնի երեելի գրատան մէջ: Ստանալով այս կանոնները՝ ինքն Վրթանէսը մի քանի եպիսկոպոսների խորհրդակցութեամբ քննեց նոյա իմաստը և իւր կողմից ևս աւելացնելով մի քանի կարգեր եկեղեցու խորհուրդները ուղղութեամբ պահելու և կատարելու համար՝ բոլոր Հայոց եպիսկոպոսներին ուղարկեց նոյա պատճէնները՝ պատուիրելով միշտ առաջնորդ ունենալ ալդ կանոնները և միակերպ կատարել ամենայն տեղ եկեղեցու սուրբ խորհուրդները:

Ալդ միջոցին Հայաստանում հռչակուեցաւ Սուրբ Յակով Մծբնայ հայրապետը, որը մականուամբ կոչվում էր Զգոն (իւրօք, իմաստուն): Սա Ս. Գր. Լուսաւորչու հօրաքրոջ, ալսինքն Անակի քրոջ Խոսրովուհու որդին էր, ինչպէս աւանդում են ծառընտիրները, Յայսմաւուրքը, Գրիգոր Նարեկացին ևալք: Սուրբ Յակովը այնպիսի մեծ անուն ունէր որ՝ Հրաւելուեցաւ Նիկիալի առաջին տիեզերական ժողովը և խիստ շատ պատիւ վայելեց ժողովի միւս Հայրապետներից: Վրթանէս

կաթողիկոսը՝ յանկանալով տեսնել իւր ազգական սուրբ Յակովը՝ հրաւելու թուղթ ուղարկեց նորան, ալլ և խնդրեց նորանից գրել հարկաւոր բացատրութիւններ հաւատի և ուրիշ եկեղեցական բաների վերայ: Ալդ պատճառով Սուրբ Յակովը շարադրեց 18 հատ ճառ սքանչելի վարդապետութեամբ և ուղարկեց Վրթանէսին, որը շատ հաւանելով նոցա՝ պատուիրեց իւր աշակերտներին որ նոքա սովորեն և ուրիշներին սովորացնեն ալդ ճառերը: Սուրբ Յակովը ճառերը կոչվում են Զգոնգերք: Մեր եկեղեցին իւր սրբոց շարքում դասեց Սուրբ Յակովը և լիշտակում է սորա անունը: Սորա մտսունքները շատ տեղ տարածուեցան, իսկ աջը մինչև այժմ մնում է Եջմիածնի սրբութեանց մէջ:

— Թէպէտ Արիստակէսը և Վրթանէսը միշտ քարոզում էին ժողովրդին Սուրբ Աւետարանը և ճշմարիտ Աստուծոյ պատուիրանները, ամենայն ջանքով աշխատելով հիմնաւոք կերպով հաստատել Հայաստանի մէջ քրիստոնէութիւնը, բայց շատերը, մանաւանդ իշխաններից և նախարարներից, դեռ ևս աւելի պինդ չէին նոր հաւատի մէջ, դեռ ևս չէին թողել իւրեանց հին հեթանոսական սովորութիւնները, գոր օրինսկ՝ տան մէջ հարճեր (միքանի կին) պահել և այլն: Տրդատ թագաւորը, որը իբրև ճշմարիտ առաքեալ՝ մեծ փափառվ աշխատում էր տարածել և հաստատել իւր ազգի մէջ քրիստոնէութիւնը, և որը այնպէս օգնում էր Ս. Գրիգոր Լուսաւորչին և նորա որդոցը՝ շատ վշտանում էր տեսնելով այդպիսի վատութիւնները և միշտ յանդիմանում և խրատում էր մեղաւորները: Բայց նկատելով որ՝ ի զուր են կորչում իւր խօսքերը, ծերունի Տրդատը վշտացած և ձանձրացած, մանաւանդ թագաւորական ծանր պաշտօնը վարելուց, թողեց իւր գահը և թագը և գնաց առանձնացաւ Դարանաղեաց Սեպուհ սարի վերայ եղած Մանեալ ալը, ուր

ճգնում էր և վախճանուեցաւ Ս. Գր. Լուսաւորիչը, և ինքն Աս սկսեց ճգնել այնտեղ: Նախարարները—ոմանք երկիւղից, ոմանք ամօթից և ոմանք խղճմտանքից տանջուած—մեծ բազմութեամբ գնացին Տրդատի մօտ և ինդրեցին որ նա վերադառնալ և շարունակէ իւր թագաւորութիւնը, խոստանալով թողնել իւրեանց վատ գործքերը և ուղղուիլ բոլորովին: Բայց Տրդատը լաւ իմանալով նոցա բնաւորութիւնը և մտածելով աւելի իւր հոգու վերայ, չը համաձայնուեցաւ կատարել նախարարների ինդիրքը: Նոցանից ոմանք՝ որչափ զայրացած այդ պատճառով, այնչափ և առաւել ևս ցանկանալով շուտով ազատվիլ Տրդատից՝ հեթանոսական գարելի քարբարոսութեամբ գործեցին սարսափելի դաւաճանութիւն, թոյն տուին նորան, որով զրկեցին կեանքից արդար և Աստուծոյ սիրելի մարդը: Տրդատը վախճանուցաւ 341 թուին Փրկչի՝ թագաւորելով մօտ 56 տարի և ապրելով մօտ 85 տարի, և թաղուեցաւ Անի կամ կամախ ամրոցում: Նորա մահը մեծ վիշտ և տրտմութիւն պատճառեց Վրթանէսին և ամբողջ ազգին: Մեր եկեղեցին արժանապէս դասեց նորան իւր սրբոց շարքում և լիշտակում է նորա անունը Սուրբ Պատարագի ժամանակ «Առաքելոց» կոչուած (թագաւորաց հաւատացելոց սրբոց և այլն) լիշտակութեան մէջ:

Որովհետեւ Վրթանէսը Հայրապետական վստահութեամբ սկսեց յանդիմանել և նախատել նախարարների տիրասպան չարագործութիւնը, ուստի նոքա զայրացած կամեցան սպանել և նորան: Եւ երբ Վրթանէսը գնաց Տարօն գաւառը Յովհաննէս Մկրտչի (Սուրբ Կարապետ) տօնը մեծ հանդէսով կատարելու համար, ինչպէս կարգադրել էր և հաստատել էր

այս սովորութիւնը ինքն Ս. Գր. Լուսաւորիչը, չարամիտ նախարարները մարդիկ ուղարկեցին Տարօնի (Մուշ) բնակիչների մօտ, լորդորելով որ՝ նոքա սպանեն իւրեանց Հայրապետը, բայց այս չար խորհուրդը չը յաջողուեցաւ—Աստուծոյ հրամանով և այն պատճառով՝ որ ոչ ոք չը համաձայնեցաւ թափել իւր սիրելի կաթողիկոսի անմեղ արիւնը: Վրթանէսը անվնաս և անփորձ գնաց այն տեղից Եկեղեց դաւառի թիւ աւանը, որ էր նոցա հայրենական ժառանգութեան կալուածքը և ուր թաղուած էր Արիստակէսի մարմինը նորա շինած վանքում:

—Տրդատի մահից յետոյ մեծ խռովութիւնք ծագեցան Հայաստանում թագաւորական գահի համար: Սանատրուկ իշխանը, ազգով Արշակունի և փոքր ինչ ազգական Տրդատին, կուսակալ լինելով Փալտակարանի և Աղուանից կողմերի վերայ, ապստամբեցաւ և թագ դնելով իւր գլխին՝ կամեցաւ տիրել բոլոր Հայաստանին: Լոելով այս՝ Աղձնեաց նահանգի մեծ իշխան Բակուր բգեշխը նոյնակէս ապստամբեցաւ և կամենում էր ինքնազլուխ թագաւոր լինել իւր աշխարհում: Բայց միւս աւելի խոհեմ և հաւատարիմ նախարարները՝ գուշակելով այսպիսի խառնակութեան վատ հետեւանքները՝ կամեցան շուտով այս խռովութեան առաջը փակել: Եւ որովհետեւ Վրթանէսը մեծ համարմունք և պատիւ ունէր ժողովրդի կողմից և ազգալին քաղաքական գործերի մէջ՝ որչափ իբրև Լուսաւորչի որդի, նոյնչափ և իւր անձնական արժանաւորութեան և ազգասկրական եռանդիք պատճառով, ուստի բարեմիա նախարարները ժողովուեցան

նորա մօտ և խորհուրդ անելով որոշեցին Տրդատի հարագատ որդին Խոսրովը թագաւոր նստացնել: Եւ որպէս զի ապահով և աներկիւղ լինին Պարսից թագաւորից՝ որոշեցին Յունաց Կոստանդ կայսեր (որը մեծ Կոստանդիանոսի որդին էր) միջնորդութեամբ կատարել այս դործը, ուստի գեսպաններ և թուղթ ուղարկեցին այս մասին կայսեր մօտ: Այդ թղթի վերայ ամենից առաջ ձեռք քաշեց ինքն Վրթանէսը, յետու եպիսկոպոսները և ապա Հայոց բոլոր նախարարները: Եւ պէտք է ասել որ՝ այսպիսի մեծ մեծ գործերում առանց մասնակցութեան և օգնութեան կաթողիկոսների և եպիսկոպոսների չէր կարելի մնալ, որովհետև թէ օտար տէրութիւնները և թէ մանաւանդ ինքն Հայոց ազգը առանց նոցա մասնակցութեան բռնած գործը անհաստատ և անվաւէր էր համարում:

Կոստանդ կայսրը տեսնելով որ այդ գործի մէջ մեծ օգուտ կալ իւր տէրութեան համար՝ մեծ ուրախութեամբ և հաւանութեամբ ընդունեց Հայոց առաջարկութիւնը և իսկոյն Հայաստան ուղարկեց իւր Անտիօքոս զօրապետը մեծ զօրքով, թագաւորական ծիրանի և թագ Խոսրովի համար, և մի թուղթ, որը սկսվում է այսպէս—«Օգոստոս ինքնակալ կայսր Կոստանդոս Մեծիդ Վրթանէսի և քո բոլոր հայրենակիցներին խնդալ...»: Այս խօսքերից երեսում է թէ որպիսի մեծ պատիւ ունէր Վրթանէսը Յունաց կայսեր առաջեւ իբրև Հայոց կաթողիկոս:

Խոսրովը թագաւոր գառնալով՝ գժբախտաբար նման չեղաւ իւր հօրը թէ զօրութեամբ, թէ հայրենասիրութեամբ և թէ մանաւանդ հոգեկան յատկութիւններով: Սա անհոգ և թուլասիրտ մարդ լինելով՝ չէր սիրում պատերազմներ, առշադրութիւն չէր գարձնում երկրի ներքին կառավարութեան և բարեկարգութեան վերայ, այլ պարապում էր որ-

սորդութիւնով և այլ տեսակ զուարձութիւններով և զբոսանքներով: Խոսրով Բ. միայն իննը տարի թագաւորեց, 343—352 և վախճանուեցաւ 352 թ. Փրկչի:

Խոսրով Բ.—ի մահից լետոյ երկիւղ կրելով որ՝ գարձեալ չը նորոգուի միքանի հզօր նախարարների ապսամբութիւնները և երկրին մեծամեծ վնասներ պատճառող խոռովութիւնները՝ Վրթանէսը շտապով ժողովեց իւր մօտ բոլոր նախարարները և զօրապետները, այլև միքանի եպիսկոպոսները, և խորհուրդ անելով միասին՝ որոշեցին թագաւոր նստացնել գարձեալ Յունաց կայսեր օգնականութեամբ Խոսրով Բ.—ի որդին Տիրանը: Գործին աւելի մեծ յաջողութիւն տալու նպատակով ինքն Վրթանէսը յանձնառու եղաւ գնալ Կ. Պօլիս կայսեր մօտ, տանելով իւր հետ և Տիրանը: Մեծ հանդէսով, զօրքով և զօրապետներով, իշխաններով և նախարարներով, ճանապարհ ընկաւ ազգասէր հայրապետը գէպի Կ. Պօլիս և աւելի շքեղ և փառաւոր պատուով ընդունուեցաւ Կոստանդ կայսեր կողմէց: Կայսրը իսկոյն կատարեց Վրթանէսի խնդիրն և մեծ ընծաներով ու կայսերական զօրքով վերադարձեց նոցա:

—Տիրանը 353 թ. սկսեց թագաւորել Հայաստանի վերայ, բայց սա տարաբախտաբար նմանեցաւ իւր հօրը, և մանաւանդ սկսեց վարել անբարույսկան կեանք, բայց ծածուկ կերպով, որովհետև խիստ ակնածում էր և վախենում էր Վրթանէսից:

—Վրթանէսը, այս երանելի և սուրբ հայրապետը, այս արթուն և քրտնաջան հովիւր Հայաստանեայց Եկեղեցու, այս տղգատսէր և հզօր պաշտպանը Հայոց ազգի և նորա թագաւորութեան, ամբողջ տասն և հինգ տարի վարելով կաթողիկոսական ծանր պաշտօնը և կենսամաշ լինելով խիստ շատ գործերով, վերջապէս կնքեց իւր երկրաւոր կեանքը

ՅԵՅ թ., ապրելով 78 տարի: Իւր խնդրանօք նորա մարմինը
թաղեցին Դարանալեաց գաւառի Թողդան գիւղում:

— Հայաստանեալց Ս. եկեղեցին միշտ երախտադէտ լի-
նելով գէպի իւր հովիւները և Հայրապետները և ճանաչե-
լով ու գնահատելով նոցա քրտնաջան վաստակները և առա-
քելական պարտաւորութեանց կատարումն, սրբոց կարգը
դասեց Ս. Արիստակէսը և Ս. Վրժանէսը և նոցա անունը
միշտ լիշվում է Սուրբ Պատարագի ժամանակ «Առաքելոց»
կոչուած (Առաջնորդացն մերոց և առաջին լուսաւորչացն
սրբոց) լիշատակութեան մէջ:



2002
177

4362

13



4229